



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/2836/05/22

Նախագահող դատավոր՝ Կ. Ավետիսյան

Դատավորներ՝ Ս. Հովակիմյան
Ռ. Մախմուդյան

Վարչական գործ թիվ ՎԴ/2836/05/22
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող և զեկուցող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

2025 թվականի հուլիսի 14-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.03.2024 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կարեն Դարբինյանի ընդդեմ Կոմիտեի՝ հայցվորի կողմից փոստային առաքմամբ ԵԱՏՄ անդամ երկիր չհանդիսացող երկրներից բացառապես անձնական կարիքների համար ներմուծված ապրանքները որպես անձնական օգտագործման ճանաչելուն և առանց հայտարարագրման պահանջի բաց թողնելուն՝ ղեկավարվելով ԵԱՏՄ Մաքսային միության 107 որոշմամբ սահմանված անձնական ապրանքների բաց թողնման ընթացակարգով, պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կարեն Դարբինյանը պահանջել է պարտավորեցնել Կոմիտեին իր կողմից փոստային առաքմամբ ԵԱՏՄ անդամ երկիր չհանդիսացող երկրներից բացառապես անձնական կարիքների համար ներմուծված ապրանքները ճանաչել որպես անձնական օգտագործման և բաց թողնել առանց հայտարարագրման պահանջի՝ ղեկավարվելով ԵԱՏՄ Մաքսային միության 107 որոշմամբ սահմանված անձնական ապրանքների բաց թողնման ընթացակարգով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 01.12.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.03.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.12.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ, 28-րդ, 68-րդ, 123-րդ, 124-րդ և 126-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ: Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել գործում առկա մի շարք ապացույցներ, որոնք սույն հայցատեսակի շրջանակներում եզրահանգում կատարելու համար էական նշանակություն են ունեցել: Վերաքննիչ դատարանի եզրահանգումները հիմնված են բացառապես Կոմիտեի 06.07.2022 թվականի թիվ /21-1/47416-2022 գրության վրա: Արդյունքում խախտվել են պատճառաբանված դատական ակտ կայացնելու և գործի բոլոր հանգամանքները պատշաճ քննության առարկա դարձնելու իրավական պահանջները:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը չի հետազոտել ներմուծված ապրանքների բնույթը բացահայտող ապացույցները, ըստ այդմ, դրանց հայտարարագրման պարտադիր պահանջը՝ օրենքով սահմանված արգելքների և սահմանափակումների պահպանմամբ: Որևէ գնահատական չի տրվել նաև ապրանքների քանակին, հայցվորի կողմից նախկինում ներմուծված նույն բնույթի ապրանքների վերաբերյալ ներկայացված ապրանքային հայտարարագրերին, ընդ որում, թիվ 05100011/071221/0044328, թիվ 05100011/240122/0002061 ապրանքային հայտարարագրերը որպես ապացույց պահանջվել են Դատարանի որոշմամբ, սակայն թե՛

վճռում, թե՛ Վերաքննիչ դատարանի որոշմամբ որևէ նշում չկա նույնիսկ Դատարանի կողմից պահանջված ապացույցների հետազոտման և գնահատման վերաբերյալ, որոնք վկայում են ներմուծված ապրանքների պարտադիր հայտարարագրման մասին: Հետևաբար տվյալ ապացույցների հետազոտումն էական նշանակություն կունենար գործի ելքի համար:

Սույն գործում առկա նյութերի և ապացույցների պատշաճ հետազոտման արդյունքում պարզ կլիներ, որ Կարեն Դարբինյանի կողմից ներմուծված ապրանքները կարող են բաց թողնվել դրանց մաքսային հայտարարագրումից հետո, քանի որ իրենց բնույթով պայմանավորված՝ դրանց համար պահանջվում է ներմուծման թույլատրական կարգ, ուստի դրանք չեն կարող դասվել անձնական օգտագործման ապրանքների շարքին և բաց թողնվել առանց հայտարարագրման: Այդ մասին վկայում են նաև ապացույցներում առկա նույն բնույթի ապրանքների վերաբերյալ հայտարարագրերը և դրանց կից ներկայացված փաստաթղթերը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը եզրահանգումը կատարել է՝ հիմնվելով միայն Կոմիտեի 06.07.2022 թվականի թիվ /21-1/47416-2022 գրության վրա և գնահատելով դրա իրավաչափությունը, սակայն հաշվի չի առել, որ սույն դատական գործն անհրաժեշտ է քննել ոչ թե վիճարկման հայցի կանոններով՝ գնահատելով գրության՝ որպես վարչական ակտի իրավաչափությունը, այլ գործը պետք է քննել գործողության կատարման հայցի կանոններով, որի դեպքում անհրաժեշտ է գնահատել հայցվող գործողության իրավաչափությունը, որը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.03.2024 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստերը.

1) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին ուղղված 04.07.2022 թվականի դիմում-բողոքով Կարեն Դարբինյանը հայտնել է, որ ԵԱՏՄ չհանդիսացող երկրից փոստային առաքմամբ ձեռք է բերել հետևյալ ապրանքները. 8 հատ դատարկ 100 մլ տարողությամբ պլաստմասե տարաներ, 6 հատ տեսաքարտ, 1 հատ համակարգչի սնուցման աղբյուր, 1 հատ գարեջրի տնայնագործական արտադրության սառեցման ջերմափոխանակիչ, 5 հատ խրոցակային եղանիկանման միացման պարագաներ, 2 հատ համակարգչի հովացման ջերմափոխանակիչ, 1 հատ ջերմափոխանակիչ, բացառապես անձնական օգտագործման համար, որոնք Մաքսային մարմինների կողմից դասվել են ոչ անձնական նշանակության: Նույն դիմումով խնդրել է հանձնարարարել ՀՀ մաքսային մարմիններին վերոնշյալ ապրանքները դիտարկել անձնական օգտագործման և ղեկավարվել ԵԱՏՄ 107 որոշմամբ սահմանված անձնական ապրանքների բացթողնման ընթացակարգով: **(հատոր 1-ին, գ.թ. 25-26).**

2) Նշված դիմումին ի պատասխան ստացվել է ՀՀ ՊԵԿ 06.07.2022 թվականի թիվ /21-1/47416-2022 գրությունը, որով հայտնվել է, որ ՀՀ ներմուծված խնդրո առարկա ապրանքները, ելնելով ապրանքների բնույթից և քանակից, մաքսային մարմնի կողմից

չեն դիտարկվել անձնական օգտագործման ապրանքներ, ուստի առաջարկվել է ներկայացնել ապրանքների հայտարարագիր: **(հատոր 1-ին, գ.թ. 27-29).**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ և 27-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի պարզաճ իրացվելիության և դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի պահպանվածության համադրությամբ հարկ է համարում անդրադառնալ ներկայացված ապացույցների՝ դատարանի կողմից գնահատման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"):

2. Դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

3. Դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ***ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:***

Վճռաբեկ դատարանը, փաստելով, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու («ex officio») սկզբունքը վարչական արդարադատության մեջ իր առանձնահատուկ դրսևորումն ունի նաև ապացուցման գործընթացում, մասնավորապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի ուժով դատարանը պարտավոր է պահանջել, որպեսզի ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները, հարկ է համարում անդրադառնալ առհասարակ ապացուցման գործընթացին՝ առանձնահատուկ ընդգծելով վերջինիս կարևորությունը դատական ակտի պատճառաբանվածության հատկանիշի պահպանման գործում: Այսպես՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմերի համակցված վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ թեև ներքին համոզմունքը սուբյեկտիվ կատեգորիա է, այդուհանդերձ, օրենսդիրն այն դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը հանգեցնում է իրավական գնահատականների, հետևաբար և դատավարական օրենսդրությամբ նախատեսել է դրա օբյեկտիվության ապահովմանն ուղղված որոշակի երաշխիքներ, մասնավորապես՝

1) որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը,

2) դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով:

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը:

Այսպիսով, ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը, որը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանին ընձեռված իրավական հնարավորությամբ (*տե՛ս, Զաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի տարածքային ստորաբաժանման թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է նաև, որ վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

(...)

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն

պատճառաբանված, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման հիմքերը:

Այսպիսով, ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով (*տե՛ս Հայկ Սիմոնյանն ընդդեմ Գյումրու համայնքապետարանի՝ թիվ ՎԴ5/0173/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2021 թվականի որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի պատճառաբանվածության և հիմնավորվածության պահանջի պահպանվածությունը իրավունքի սահմանափակման իրավաչափության կանխորոշիչ նախապայմանն է, որի չափանիշը, ի թիվս այլնի, նաև ներկայացված վերաբերելի և թույլատրելի ապացույցների լրիվ և բազմակողմանի հետազոտությունն է, որի արդյունքում կատարված եզրահանգումների հիման վրա դատարանը հաստատում կամ հերքում է գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը՝ կայացնելով պատճառաբանված դատական ակտ:

Նշվածի առնչությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածը նախատեսում է իրավական կարգավորում առ այն, որ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը դատական ակտի պատճառաբանվածության հատկանիշի երաշխավորման նպատակով սահմանել է դատական ակտի բովանդակությանը և կառուցվածքին ներկայացվող հստակ պահանջներ՝ սահմանելով դատարանի կողմից կատարվող պարտադիր և փոխկապված գործողությունների հաջորդականություն, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասը բովանդակում է՝

1) գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

2) գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերը՝ շարադրելով դատարանի եզրահանգումները յուրաքանչյուր փաստի ապացուցված լինելու վերաբերյալ և գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար պիտանի՝ դատավարության մասնակիցների ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը.

3) եզրահանգում՝ կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք դատարանը վերաբերելի է համարում.

4) եզրահանգում՝ որևէ ապացույց անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու մասին՝

ա. հղում կատարելով այն իրավանորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող,

բ. շարադրելով այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը եկել է նման եզրահանգման.

5) եզրահանգում՝ դատավարության մասնակիցների պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ.

6) դատարանի դիրքորոշումը՝ դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը վերոգրյալի կապակցությամբ փաստում է, որ դատական ակտի պատճառաբանվածության բաղադրատարր հանդիսացող գործի լուծման համար ինչպես էական նշանակություն ունեցող, այնպես էլ էական նշանակություն չունեցող փաստերի արձանագրմանը և դրանց հիման վրա համապատասխան եզրահանգումների կատարմանը նախորդում է ապացույցների հետազոտումը և գնահատումը դատարանի կողմից, իսկ ներկայացված շղթայի հաջորդական պատշաճ իրականացման արդյունքում կայացված դատական ակտը հավակնում է դատական ակտին ներկայացվող պատճառաբանվածության և հիմնավորվածության չափանիշների պահպանվածությամբ դատական ակտի որակման:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կարեն Դարբինյանը, դիմելով դատարան, պահանջել է պարտավորեցնել Կոմիտեին իր կողմից փոստային առաքմամբ ԵԱՏՄ անդամ երկիր չհանդիսացող երկրներից բացառապես անձնական կարիքների համար ներմուծված ապրանքները ճանաչել որպես անձնական օգտագործման և բաց թողնել

առանց հայտարարագրման պահանջի՝ ղեկավարվելով ԵԱՏՄ Մաքսային միության 107 որոշմամբ սահմանված անձնական ապրանքների բաց թողնման ընթացակարգով:

Դատարանը, 01.12.2022 թվականի վճռով բավարարելով հայցը, արձանագրել է, որ «*փաստացի ապրանքները ոչ անձնական օգտագործման դասելու գործառույթն իրականացնելիս վարչական մարմինն առաջնորդվել է Օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դրույթներով, մինչդեռ, որևէ կերպ թե՛ պատասխան գրությամբ, թե՛ պատասխանողի դիրքորոշմամբ չի հիմնավորվել ապրանքները վերջնանշված դրույթներով տրված չափորոշիչների հաշվառմամբ ոչ անձնական օգտագործման դասելու գործընթացը, քանզի Օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից, ելնելով՝ ապրանքների մասին ֆիզիկական անձի բանավոր կամ գրավոր դիմումից, ապրանքների բնույթից և քանակից, ինչպես նաև ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանը հատելու և (կամ) այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականությունից, այսինքն՝ նշված դրույթները նախատեսում են որոշակի վերլուծական և համադրական գործընթաց, որի արդյունք պետք է լինի վարչական մարմնի եզրահանգումը՝ ապրանքները անձնական օգտագործման ապրանքների շարքին չդասելու մասին, որը պետք է հիմնված լինի կոնկրետ փաստական տվյալների վրա, համահունչ չափանիշներին և սահմանված իրավանորմներին:*

Սույն դեպքով տեղափոխվել է 8 հապ դատարկ 100 մլ տարողությամբ պլաստմասե տարաներ, 6 հապ տեսաքարտ, 1 հապ համակարգչի սնուցման աղբյուր, 1 հապ գարեջրի տնայնագործական արտադրության սառեցման ջերմափոխանակիչ, 5 հապ խրոցակային եղանկականման միացման պարագաներ, 2 հապ համակարգչի հովացման ջերմափոխանակիչ, 1 հապ ջերմափոխանակիչ:

Վարույթի նյութերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեին և վերջինիս 06.07.2022թ. թիվ /21-1/47416-2022 գրությամբ և պատասխանողի դիրքորոշումներով որևէ կերպ չի բացահայտվել, չի հիմնավորվել և առհասարակ անդրադարձ չի կատարվել այն հանգամանքին, թե ինչպես է վարչական մարմինը եկել այն եզրահանգման, որ վերը նշված ապրանքները մաքսային սահմանով տեղափոխվել են ոչ անձնական օգտագործման համար և դրանք չի դասել անձնական օգտագործման ապրանքների շարքին:

Միաժամանակ, դատարանն արձանագրում է, որ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ ներկայումս առկա չէ ուժի մեջ գտնվող այնպիսի իրավական ակտ, որը սույն գործի հանգամանքների առնչությամբ՝ սահմանում է այն չափաքանակները, ապրանքատեսակները և այլ լրացուցիչ բնութագրերը, որոնցով հնարավոր կլինի հստակ որոշելու սահմանով տեղափոխվող ապրանքի անձնական օգտագործման ապրանք հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքը:

Իսկ ինչ վերաբերում է պատասխանողի կողմից վկայակոչված 2010 թվականի հունիսի 18-ին ստորագրված համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետին, ապա հարկ է արձանագրել, որ այն Օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ կետին համանման՝ սահմանում է

ընդհանուր դրույթները՝ ապրանքները անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու գործառույթի իրականացման վերաբերյալ»:

Վերաքննիչ դատարանը, 07.03.2024 թվականի որոշմամբ մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և անփոփոխ թողնելով Դատարանի 01.12.2022 թվականի վճիռը, պատճառաբանել է, որ «(...)քննարկվող իրավահարաբերությունների մասով Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացնում է մաքսային մարմինը՝ ելնելով 1) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի բանավոր կամ գրավոր դիմումից՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ, 2) ապրանքների բնույթից և քանակից, 3) ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանը հատելու և (կամ) այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականությունից: Ըստ այդմ, հայցվորին հասցեագրված 2022 թվականի հուլիսի 06-ի գրությամբ Կոմիտեն հայտել է, որ ՀՀ ներմուծված վիճահարույց ապրանքները, ելնելով դրանց բնույթից և քանակից, մաքսային մարմնի կողմից չեն դիտարկվում անձնական օգտագործման ապրանքներ: Ստացվում է, որ հայցվորի կողմից ներմուծված Ապրանքները ոչ անձնական օգտագործման լինելու իր հետևությունը մաքսային մարմինը բխեցրել է Ապրանքների բնույթի և քանակի գնահատման արդյունքում ձևավորած դիրքորոշումից: Մինչդեռ, նշված գրությունից պարզ չէ, թե հատկապես ինչ քանակի և բնույթի պեղք է լինելն ներմուծված ապրանքներն ընդհանրապես, որպեսզի դրանք համապատասխանենին <ապրանքներ անձնական օգտագործման համար> իրավաբանական եզրույթին, և միաժամանակ նույն գրությամբ չի հատկորոշվել, թե կիրառված չափորոշիչներն ինչպես են թույլ տալիս ուղիղ պնդելու, որ մասնավորապես, 8 հատ դատարկ 100մլ տարողությամբ պլաստմասե տարաները, 1 հատ <Nvidia Titan Xp> համակարգչային տեսաքարտը, 2 հատ <Nvidia Titan X>, 2 հատ <Nvidia Titan X>, 1 հատ <RTX 2080 ti> տեսաքարտերը, 1 հատ համակարգչի սնուցման աղբյուրը, 1 հատ գարեջրի տնայնագործական արտադրության սառեցման ջերմափոխանակիչը, 5 հատ խրոցակային եղանիկանման միացման պարագաները, 2 հատ համակարգչի հովացման ջերմափոխանակիչը, 1 հատ ջերմափոխանակիչն այլևս այն բնույթի և քանակի ապրանքներն են, որոնք օբյեկտիվորեն չեն կարող դասվել <ապրանքներ անձնական օգտագործման համար> ապրանքների կազմին, որպիսի իրողությունը թույլ չի տալիս եզրահանգում կատարել մաքսային մարմնի դիրքորոշման հավաստիության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի փաստարկին առ այն, որ Վարչական դատարանը գնահատման չի արժանացրել հայցվորի կողմից իրականացված ներմուծումների հաճախականությունը, ապա նախ՝ հայցվորին հասցեագրված գրությամբ Կոմիտեն որևէ անդրադարձ չի կատարել հայցվորի իրականացրած ներմուծումների հաճախականության հանգամանքին՝ դրանով, փաստորեն, չպայմանավորելով հայցվորի ներմուծած Ապրանքներն անձնական օգտագործման համար չորակելու իր եզրահանգումը, հետո՝ հատկորոշված փաստական հանգամանքների վերլուծություն և բացահայտում իրականացված չլինելու պայմաններում, միևնույն է, օբյեկտիվորեն կասկածելի է մնում

Ապրանքներն անձնական օգտագործման համար չլինելու վերաբերյալ Կոմիտեի եզրահանգման՝ իրերի իրական դրությանը համապատասխանելու փաստը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ապրանքների համար հայտարարագիր ներկայացվելու անհրաժեշտության մասին Կոմիտեի եզրահանգումն ապահովված չէ անհրաժեշտ և բավարար փաստական հանգամանքներով և դրանց նկատմամբ կիրառելի իրավական հիմքերով»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Կարեն Դարբինյանը բողոք է ներկայացրել՝ հասեագրված Կոմիտեին, որում մասնավորապես նշվել է հետևյալը. «Ինչն է պատճառը, որ իմ կողմից փոստային առաքմամբ ԵԱՏՄ անդամ երկիր չհանդիսացող երկրներից բացառապես անձնական կարիքների նպատակով ներկրվող ապրանքները ՀՀ մաքսային մարմինների կողմից անկախ մաքսային արժեքից, քանակից և ԱՏԳԱԱ դասիչից բացառապես պահանջ է դրվում մաքսային հայտարարագրման: Ինչպես և ինչ չափանիշներով են որոշվում ներկրվող ապրանքների բացահայտ առևտրային սահմանաչափը ԵԱՏՄ անդամ երկիր չհանդիսացող երկրներից ապրանքների ներկրման մասով: Ինչ և որ հանգամանքներում է շար համարվում քաղաքացու կողմից **առաջին անգամ և եզակի քանակությամբ** անձնական նպատակով ներկրվող իրը (...):

Ուստի անհիմն են համարում ՀՀ Մաքսային մարմինների կողմից վերանշյալ ապրանքների ոչ անձնական նշանակության դասելը և խնդրում են հանձնարարել ՀՀ մաքսային մարմիններին վերոնշյալ ապրանքները դիտարկել անձնական օգտագործման և ղեկավարվել ԵԱՏՄ 107 որոշմամբ սահմանված անձնական ապրանքների բացթողնման ընթացակարգով» (հատոր 1-ին, գ.թ. 25-26):

Կոմիտեի արևմտյան մաքսատուն-վարչության պետ Գարիկ Մինասյանի կողմից ի պատասխան Կարեն Դարբինյանի 04.07.2022 թվականի թիվ Դ/20854-2022 դիմումի ներկայացվել է գրություն՝ հետևյալ բովանդակությամբ. «(...) Միության անդամ պետությունների մաքսային միությունների միավորված կոլեգիայի 28.09.2017թ. N24/13 որոշման հավելվածով հաստատվել են ռիսկի այն ցուցիչների ցանկը, որոնք կիրառվում են Միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքները անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելիս:

Միաժամանակ հայտնում են նաև, որ «ՀՀ Արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգում առկա են Ձեր կողմից ներկայացված **թիվ 05100011/071221/0044328 և 05100011/240122/0002061 ապրանքների հայտարարագրերը:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ձեր կողմից ՀՀ ներմուծված խնդրո առարկա ապրանքները ելնելով ապրանքների բնույթից և քանակից, մաքսային մարմնի կողմից չեն դիտարկվել անձնական օգտագործման ապրանքներ, ուստի Ձեզ առաջարկվել է ներկայացնել ապրանքների հայտարարագիր (...):»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Այսպես, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ նույն Օրենսգրքի նպատակներով գործածվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝ «ապրանքների ներմուծում Միության մաքսային տարածք»՝ Միության մաքսային սահմանը հատելու հետ կապված գործողությունների իրականացում, որոնց արդյունքում ապրանքները Միության մաքսային տարածք են ժամանել ցանկացած միջոցով, այդ թվում՝ միջազգային փոստային առաքանիներով առաքման, խողովակաշարային տրանսպորտի և էլեկտրահաղորդման գծերի օգտագործման միջոցով՝ մինչև մաքսային մարմինների կողմից այդպիսի ապրանքների բացթողումը:

Նույն մասի 46-րդ կետի համաձայն՝ «անձնական օգտագործման ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք նախատեսված են ֆիզիկական անձանց՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային և այլ կարիքների համար և Միության մաքսային սահմանով տեղափոխվում են ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով, միջազգային փոստային առաքանիներով առաքման կամ այլ եղանակով:

Օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձնական օգտագործման ապրանքները կարող են Միության մաքսային սահմանով տեղափոխվել հետևյալ եղանակներով՝

1) ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանով անցնելու ժամանակ՝ ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով.

2) միջազգային փոստային առաքանիներով.

3) փոխադրողի կողմից՝ Միության մաքսային սահմանը չհատած ֆիզիկական անձի հասցեով կամ Միության մաքսային սահմանը չհատած ֆիզիկական անձի անունից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ ելնելով

1) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի բանավոր կամ գրավոր դիմումից՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ.

2) ապրանքների բնույթից և քանակից.

3) ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանը հատելու և (կամ) այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականությունից:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված չափանիշների քանակական բնութագրերը և (կամ) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման

ապրանքների շարքին դասելու լրացուցիչ չափանիշները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Օրենսգրքի 457-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի դրույթները կիրառվում են մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որն ընդունվել է նշված հոդվածի 5-րդ կետին համապատասխան, և որով սահմանվում են Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու չափանիշների քանակական բնութագրերը:

Իսկ մինչև Հանձնաժողովի նշված որոշումն ուժի մեջ մտնելը համապատասխան իրավահարաբերությունների կարգավորումն իրականացվում է՝ «Ֆիզիկական անձանց կողմից Մաքսային Միության մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքների փոխադրման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) 3-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան:

Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ՝ ելնելով

- տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի դիմումից (բանավոր կամ գրավոր՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ)՝ սույն Համաձայնագրով սահմանված դեպքերում.

- ապրանքների բնույթից և քանակից.

- ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանը անցնելու և (կամ) նրանց կողմից մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հաճախականությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող իրավահարաբերությունների մասով Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ ելնելով 1) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի բանավոր կամ գրավոր դիմումից՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ, 2) ապրանքների բնույթից և քանակից, 3) ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանը հատելու և (կամ) այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականությունից:

Վերոգրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ Դատարանի 18.07.2022 թվականի որոշմամբ նաև որոշվել է Կոմիտեից պահանջել որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ներկայացնել թիվ 05100011/071221/0044328 և թիվ 05100011/240122/0002061 ապրանքների հայտարարագրերը և հայտարարագրերին կից ներկայացված բոլոր փաստաթղթերը: Ի կատարումն Դատարանի 18.07.2022 թվականի

որոշման՝ պատասխանողի ներկայացուցչի կողմից դատարան են ներկայացվել վարչական վարույթի նյութերը:

Վերոգրյալ պատճառաբանությունների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարան ներկայացված թիվ 05100011/071221/0044328 և թիվ 05100011/240122/0002061 ապրանքների հայտարարագրերի և հայտարարագրերին կից ներկայացված բոլոր փաստաթղթերի գնահատումը՝ դրանց վերաբերելիության և թույլատրելիության սահմաններում ստորադաս դատարաններին հնարավորություն կտար դրանց համադրված վերլուծության արդյունքում արձանագրելու, որ սույն պարագայում ներկայացված գրությամբ ՀՀ ներմուծված խնդրո առարկա ապրանքները, ելնելով ապրանքների բնույթից և քանակից, մաքսային մարմնի կողմից չեն կարող դիտարկվել անձնական օգտագործման ապրանքներ, ինչպես իրավաչափորեն արձանագրվել է Կոմիտեի արևմտյան մաքսատուն-վարչության պետի կողմից՝ ի պատասխան Կարեն Դարբինյանի 04.07.2022 թվականի թիվ Դ/20854-2022 դիմումի:

Քննարկվող դեպքում Միության մաքսային սահմանով տեղափոխվել են 8 հատ դատարկ 100 մլ տարողությամբ պլաստմասե տարաներ, 6 հատ տեսաքարտ, 1 հատ համակարգչի սնուցման աղբյուր, 1 հատ գարեջրի տնայնագործական արտադրության սառեցման ջերմափոխանակիչ, 5 հատ խրոցակային եղանիկանման միացման պարագաներ, 2 հատ համակարգչի հովացման ջերմափոխանակիչ, 1 հատ ջերմափոխանակիչ, ինչի առնչությամբ, վերը վկայակոչված կարգավորումների համատեքստում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ներմուծված ապրանքների քանակական բնութագիրն արդեն կասկածի տակ է դնում դրանց՝ անձնական օգտագործման նպատակներով ներմուծված լինելու հանգամանքը՝ հաշվի առնելով այն, որ նույն տեսակի ապրանքի բնույթը և բազմաթիվությունը ողջամտորեն տարակուսելի են դարձնում ապրանքների՝ ոչ առևտրային լինելու փաստի հաստատումը:

Իսկ վերը նշված հայտարարագրերի ուսումնասիրությունը լրացուցիչ բացառում է առնվազն նույնաբնույթ ապրանքների առաջին անգամ մաքսային սահմանով տեղափոխված լինելու և անձնական օգտագործման նպատակով ողջամիտ քանակով ներմուծված լինելու հանգամանքները՝ բավարարելով մաքսային մարմնի կողմից ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանը հատելու և (կամ) այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականության և քանակի՝ որպես մաքսայի մարմնի կողմից հայտարարագրման պահանջ ներկայացնելու իրավասության իրացման պայմանները, ինչն արդեն իսկ հանգեցնում է ապրանքների՝ ոչ անձնական օգտագործման նպատակով ներմուծման հանգամանքի կանխատեսելիությանը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգմանն առ այն, որ նշված գրությունից պարզ չէ, թե հատկապես ինչ քանակի և բնույթի պետք է լինեին ներմուծված ապրանքներն ընդհանրապես, որպեսզի դրանք համապատասխանեին «ապրանքներ անձնական օգտագործման համար» իրավաբանական եզրույթին, և միաժամանակ նույն գրությամբ չի հատկորոշվել, թե կիրառված չափորոշիչներն ինչպես են թույլ տալիս ուղիղ պնդելու, որ ներմուծված ապրանքներն այլևս այն բնույթի և քանակի ապրանքներն են,

որոնք օբյեկտիվորեն չեն կարող դասվել «ապրանքներ անձնական օգտագործման համար» ապրանքների կազմին, որպիսի իրողությունը թույլ չի տալիս եզրահանգում կատարել մաքսային մարմնի դիրքորոշման հավաստիության վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ հոդվածի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Վերոգրյալ կարգավորումների վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գործողության կատարման հայցի շրջանակներում իրականացվող դատական քննության առարկան հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափության գնահատումն է՝ հիմքում ունենալով օրենսդրական կարգավորումն առ այն, որ հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Վճռաբեկ դատարանը քննարկվող պարագայում արձանագրում է, որ ստորադաս դատարանը, որպես դատական ակտի պատճառաբանության ելակետ, սահմանել է Կոմիտեի արևմտյան մաքսատուն-վարչության պետի կողմից ի պատասխան Կարեն Դարբինյանի 04.07.2022 թվականի թիվ Դ/20854-2022 դիմումին ներկայացված գրությունը՝ քննարկելով գրության բովանդակությունը և մաքսային մարմնի կողմից ներկայացված փաստական հանգամանքների բավարարությունը՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականության առնչությամբ, մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անհրաժեշտ էր արդեն Դատարանի կողմից պահանջված և վարչական վարույթի նյութերում առկա ապացույցների հաշվառմամբ գնահատել հայցվող գործողության իրավաչափությունը, որի պարագայում էլ, ինչպես վերը նշվեց, կհաստատվեր մաքսային մարմնի գործողությունների իրավաչափությունը:

Այսպիսով վերոգրյալի ամփոփմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն պարագայում ներկայացված ապացույցների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ ստորադաս դատարանների կողմից իրականացվել է սխալ եզրահանգում առ այն, որ ապրանքների համար հայտարարագիր ներկայացվելու անհրաժեշտության մասին Կոմիտեի եզրահանգումն ապահովված չէ անհրաժեշտ և բավարար փաստական հանգամանքներով և դրանց նկատմամբ կիրառելի իրավական հիմքերով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով նկատի ունենալով, որ Կոմիտեն վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարել է համապատասխանաբար՝ 20.000 ՀՀ դրամ և 30.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիման վրա, ենթակա է հատուցման Կարեն Դարբինյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.03.2024 թվականի որոշումը և այն փոփոխել: Կարեն Դարբինյանի հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ հայցվորի կողմից փոստային առաքմամբ ԵԱՏՄ անդամ երկիր չհանդիսացող երկրներից բացառապես անձնական կարիքների համար ներմուծված ապրանքները որպես անձնական օգտագործման ճանաչելուն և առանց հայտարարագրման պահանջի բաց թողնելուն՝ ղեկավարվելով ԵԱՏՄ Մաքսային միության 107 որոշմամբ սահմանված անձնական ապրանքների բաց թողնման ընթացակարգով, պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. Կարեն Դարբինյանից հօգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող և զեկուցող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

